«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ

ՈՐՈՇՈՒՄ N 7/3

ք. Երևան, Խանջյան 27 **22.02.2022թ.**

«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և Էթիկայի կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 7-ը, հետևաբար, ղեկավարվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 կետի համաձայն Կոմիտեն իրավազոր է։

«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կարգապահական և Էթիկայի կոմիտեն,

Քննության առնելով 2021 թվականի հոկտեմբերի 15-ին ՀՖՖ Տեխնիկական Կենտրոն-Ակադեմիայում կայացած «Նոա»-«Սևան» (ՊԼ044) հանդիպման (այսուհետ՝ Հանդիպում) վերաբերյալ Կոմիտեում 23.10.2021թ. հարուցված կարգապահական վարույթի (այսուհետ՝ Կարգապահական վարույթ) նյութերը,

Կոմիտեն, Կարգապահական վարույթի շրջանակներում բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության ընթացքում,

Հիմք ընդունելով Կանոնակարգի 2-րդ հոդվածը, 3-րդ հոդվածը, 4-րդ հոդվածի 4.01, 4.02 և 4.03 կետերը, 5-րդ հոդվածի 5.01, 5.02, 5.04 կետերը, 12-րդ հոդվածի 12.01, 12.04 կետերը, 13-րդ հոդվածը, 14-րդ հոդվածի 14.01, 14.02, 14.04 կետերը, 18-րդ հոդվածի 18.01, 18.03 կետերը, 20-րդ հոդվածը, 21-րդ հոդվածը և 28-րդ հոդվածի 28.01, 28.02 և 28.04 կետերը, 35-րդ հոդվածը և 38-րդ հոդվածը, ինչպես նաեւ **Կանոնակարգի 2-րդ հոդվածի 2.02 կետը** (*Բացառիկ դեպքերում, երբ ֆուտբոլային սուբյեկտ չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից մարգադաշտում դրսևորվում է բացահայտ անհարգալից վերաբերմունք ֆուտբոլային սուբյեկտների, ինչպես նաև հանդիսատեսների նկատմամբ եւ որի ինքնությունը հնարավոր է լինում պարզել, ՀՖՖ Կարգապահական եւ էթիկայի կոմիտեն կարող է միջնորդությամբ դիմել ՀՖՖ Գործադիր Կոմիտեին ձեռնարկելու համապատասխան միջոցներ, այդ թվում՝ տվյալ անձի մուտքը արգելելու մարգադաշտ):*

ՀՖՖ Կարգապահական Կոմիտեն՝ 7 կողմ, 0 դեմ ձայնով

Որոշեց

1. Հաստատված համարել 2021 թվականի հոկտեմբերի 15-ին ՀՖՖ Տեխնիկական Կենտրոն-Ակադեմիայում կայացած «Նոա»-«Սևան» (ՊԼ044) հանդիպման ավարտից հետո Տիգրան Հակոբյանի կողմից Կանոնակարգի 40-րդ հոդվածի 37-րդ կետով նախատեսված կարգապահական խախտում կատարելու հանգամանքը:
2. Ֆուտբոլային սուբյեկտ հանդիսանալու հանգամանքը հաստատված չլինելու հիմքով *(ապացույցների անբավարարություն)* դիմել ՀՖՖ Գործադիր կոմիտեին՝ Տիգրան Հակոբյանի գործողությունների վերաբերյալ ՀՖՖ Կանոնադրության, Կանոնակարգերի և ՀՖՖ այլ իրավական ակտերի կիրառման ապահովմանն ուղղված անհրաժեշտ գործնական միջոցառումներ ձեռնարկելու միջնորդությամբ։
3. Առաջարկել ՀՖՖ Գործադիր կոմիտեին նախաձեռնելու ֆուտբոլային ակումբների հետ անձանց և կազմակերպությունների անուղղակի կապը ստուգելուն և բացահայտելուն ուղղված փոփոխություններ՝ ՀՖՖ կանոնակարգերում և այլ իրավական ակտերում։
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Կանոնակարգի 19-րդ հոդվածի 19.01 կետով սահմանված կարգով՝ հրապարակման պահից յոթօրյա ժամկետում։